ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-1»

ք. Երևան « 26 » « 10 » 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ազատյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **27 093 576** (քսանյոթ միլիոն իննսուներեք հազար հինգ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ առավելագույնը **22 997 700** (քսաներկու միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

3-րդ չափաբաժին՝ առավելագույնը **1 199 880** (մեկ միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

4-րդ չափաբաժին՝ **60 000** (վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

5-րդ չափաբաժին՝ առավելագույնը **2 676 000** (երկու միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

7-րդ չափաբաժին՝ **79 998** (յոթանասունինը հազար ինը հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

8-րդ չափաբաժին՝ **79 998** (յոթանասունինը հազար ինը հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

---

[1] *Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 24 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Զ. Սարկավագի 157
Հ/Հ՝ -	Հ/Հ՝ 1510023294810100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00803554
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Ազատյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	

Հավելված N 1
« 26 » « 10 » 2020թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*
1	18211500/504	Բաճկոն	**Բաճկոն** **<u>Տղամարդու աշնանային-ձմեռային բաճկոն.</u>** հանովի ուսադիրներով, դրոշով և թևքանշանով. Մուգ կապույտ գույնի, անջրաթափանց, 50-70 միկրոն հաստությամբ կտորից՝ կազմված ուղիղ ուրվագծով, ձախ լանջափեշը 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով, կայծակնաճարմանդով կոճկվող, փեշի սկզբից մինչև օձիք, ներկարված 1 սմ հաստությամբ տաք ներդիրից և հանվող	հատ	39 996	Առավելագույնը՝ 22 997 700	Առավելագույնը՝ 575	ք. Երևան, Վ.Սարգսյան 5	Առավելագույնը՝ 575	40 օրացուցային օր

			տաք ներդիրից (3 սմ հաստությամբ), տաք ներդիրները թևքերով են, որոնք ամրացվում են կայծակնաճարմանդով, ոչխարի մուգ կապույտ մորթուց հանովի օձիքից (օձիքի լայնքը 12 սմ) և տաք ներդիրով գլխանոցից: Թիկնամասը և լանջափեշերը կրծքամասում և ուսամասում 2 կտրվածքով են: Միացման տեղով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ: Թևքանիքի վրա անցնում է 2,5 մմ մուգ կարմիր եզրագիծ: Երկու լանջափեշի վրա առկա են 3,5 սմ թեքությամբ կայծակնաճարմանդով կոճկվող ներկարված գրպաններ: Աստառը մետաքսյա է, բաճկոնն ունի ձախ կողմում կոճկվող ծոցագրպան: Ծոցագրպան կարվում է նաև ներդիրի վրա, իսկ գոտկատեղում և ներքում՝ թաքնված գոտկապարան: Բաճկոնը հանվող ուսադիրներով է, որոնք							

			էլ ունեն 2-ական ամրակներ: Գլխանոցը հանովի է և պահվում է մեջքի մասում՝ օձիքի տակ ներկարված գրպանում, որը կայծակնաճարմանդով է (ՁԼ9): Բաճկոնի համար օգտագործվող նյութերի բաղադրությունը. 1. կտոր՝ 51% բամբակ, 49% պոլիէսթեր, խտությունը՝ 220գմ^2 (արտիկուլ՝ C 838(246-11)), 2. աստառ՝ բնական մետաքսից, «8-C5-ВШ» արտիկուլից, մուգ կապույտ 100գ/մ^2 խտությամբ, 3. մուգ կարմիր երիզ՝ «2581» արտիկուլի մահուդե կտորից:							
3	18211500/502	Բաճկոն	**Բաճկոն** **<u>Տղամարդու աշնանային-ձմեռային բաճկոն.</u>** **Դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոններ ունեցող դատական կարգադրիչների համար.**	հատ	39 996	Առավելագույնը՝ 1 199 880	Առավելագույնը՝ 30	ք. Երևան, Վ.Սարգսյան 5	Առավելագույնը՝ 30	40 օրացուցային օր

			հանովի ուսադիրներով, դրոշով և թևքանշանով. մուգ կապույտ գույնի, անջրաթափանց, 50-70 միկրոն հաստությամբ կտորից՝ կազմված ուղիղ ուրվագծով, ձախ լանջափեշը 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով, կայծակնաճարմանդով կոճկվող, փեշի սկզբից մինչև օձիք, ներկարված 1 սմ հաստությամբ տաք ներդիրից և հանվող տաք ներդիրից (3 սմ հաստությամբ), տաք ներդիրները թևքերով են, որոնք ամրացվում են կայծակնաճարմանդով, ոչխարի մուգ կապույտ մորթուց հանովի օձիքից (օձիքի լայնքը 12 սմ) և տաք ներդիրով գլխանոցից: Թիկնամասը և լանջափեշերը կրծքամասում և ուսամասում 2 կտրվածքով են: Միացման տեղով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ: Թևքանիքի վրա անցնում է 2,5 մմ մուգ կարմիր եզրագիծ:							

			Երկու լանջափեշի վրա առկա են 3,5 սմ թեքությամբ կայծակնաճարմանդով կոճկվող ներկարված գրպաններ: Աստառը մետաքսյա է, բաճկոնն ունի ձախ կողմում կոճկվող ծոցագրպան: Ծոցագրպան կարվում է նաև ներդիրի վրա, իսկ գոտկատեղում և ներքում՝ թաքնված գոտկապարան: Բաճկոնը հանվող ուսադիրներով է, որոնք էլ ունեն 2-ական ամրակներ: Գլխանոցը հանովի է և պահվում է մեջքի մասում՝ օձիքի տակ ներկարված գրպանում, որը կայծակնաճարմանդով է: Օձիքի մորթին պատրաստվում է պողպատագույն մորթուց (ՁԼ9): Բաճկոնի համար օգտագործվող նյութերի բաղադրությունը. 1. կտոր՝ 51% բամբակ, 49% պոլիէսթեր, խտությունը՝ 220գմ^2 (արտիկուլ՝ C 838(246-11)), 2. աստառ՝ բնական մետաքսից, «8-C5-ВШ» արտիկուլից, մուգ							

			կապույտ 100գ/մ² խտությամբ, 3. մուգ կարմիր երիզ՝ «2581» արտիկուլի մահուդե կտորից:							
4	18211500/501	Բաճկոն	**Բաճկոն** **<u>Տղամարդու աշնանային-ձմեռային բաճկոն.</u>** **Արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար.** հանովի ուսադիրներով, դրոշով և թևքանշանով. մուգ կապույտ գույնի, անջրաթափանց, 50-70 միկրոն հաստությամբ կտորից՝ կազմված ուղիղ ուրվագծով, ձախ լանջափեշը 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով, կայծակնաճարմանդով կոճկվող, փեշի սկզբից մինչև օձիք, ներկարված 1 սմ հաստությամբ տաք ներդիրից և հանվող տաք ներդիրից (3 սմ հաստությամբ), տաք ներդիրները թևքերով են, որոնք ամրացվում են կայծակնաճարմանդով,	հատ	60 000	60 000	1	ք. Երևան, Վ.Սարգսյան 5	1	40 օրացուցային օր

			ոչխարի մուգ կապույտ մորթուց հանովի օձիքից (օձիքի լայնքը 12 սմ) և տաք ներդիրով գլխանոցից: Թիկնամասը և լանջափեշերը կրծքամասում և ուսամասում 2 կտրվածքով են: Միացման տեղով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ: Թևքանիքի վրա անցնում է 2,5 մմ մուգ կարմիր եզրագիծ: Երկու լանջափեշի վրա առկա են 3,5 սմ թեքությամբ կայծակնաճարմանդով կոճկվող ներկարված գրպաններ: Աստառը մետաքսյա է, բաճկոնն ունի ձախ կողմում կոճկվող ծոցագրպան: Ծոցագրպան կարվում է նաև ներդիրի վրա, իսկ գոտկատեղում և ներքում՝ թաքնված գոտկապարան: Բաճկոնը հանվող ուսադիրներով է, որոնք էլ ունեն 2-ական ամրակներ: Գլխանոցը հանովի է և պահվում է մեջքի մասում՝ օձիքի տակ ներկարված գրպանում, որը							

			կայծակնաճարմանդով է: Օձիքի մորթին պատրաստվում է բնական կարակուլե մորթուց (Ձև 10): Բաճկոնի համար օգտագործվող նյութերի բաղադրությունը. 1. կտոր՝ 51% բամբակ, 49% պոլիէսթեր, խտությունը՝ 220գմ^2 (արտիկուլ՝ C 838(246-11)), 2. աստառ՝ բնական մետաքսից, «8-C5-ВШ» արտիկուլից, մուգ կապույտ 100գ/մ^2 խտությամբ, 3. մուգ կարմիր երիզ՝ «2581» արտիկուլի մահուդե կտորից:							
5	18421170/501	Գոտիներ	**Գոտիներ** Կաշվե գոտի՝ երկանցք, պատրաստվում է սև բնական կաշվից և ունի սև մետաղական ճարմանդ՝ 50 մմ լայնությամբ (Ձև 18):	հատ	6 000	Առավելագույնը՝ 2 676 000	Առավելագույնը՝ 446	ք. Երևան, Վ.Սարգսյան 5	Առավելագույնը՝ 446	40 օրացուցային օր
7	18211100/501	Վերարկու	**Վերարկու** Վերարկու (ձմեռային)՝ արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող աշխատակիցների համար, որը պատրաստվում է մուգ կապույտ գույնի դրապից, երկփեղկանի	հատ	79 998	79 998	1	ք. Երևան, Վ.Սարգսյան 5	1	40 օրացուցային օր

			վերարկու, 3 զույգ ոսկեգույն կոճակներով, բնական կարակուլե օձիքով, թիկնամասի ներքևում կտրվածքով: Վերարկուի ուսադիրները կարվող են, իսկ օձիքը և լանջափեշերը՝ 2,5 մմ մուգ կարմիր եզրաշերտով (Ձև 8): Վերարկուի համար օգտագործվող նյութերի բաղադրությունը. 1. աստառ՝ բնական մետաքսից, «8-C5-ВШ» արտիկուլից, մուգ կապույտ 100գ/մ^2 խտությամբ, 2. մուգ կարմիր եզրաշերտ՝ «2581» արտիկուլի մահուդե կտորից:							
8	18211100/502	Վերարկու	**Վերարկու** Տոնական վերարկու (ձմեռային)՝ արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող աշխատակիցների համար, որը պատրաստվում է պողպատագույն դրապի կտորից, երկփեղկանի վերարկու, 3 զույգ ոսկեգույն կոճակներով, բնական կարակուլե	հատ	79 998	79 998	1	ք. Երևան, Վ.Սարգսյան 5	1	40 օրացուցային օր

			օձիքով, թիկնամասի ներքևում կտրվածքով: Վերարկուի ուսադիրները կարվող են, իսկ օձիքը և լանջափեշերը՝ 2,5 մմ մուգ կարմիր եզրաշերտով (Ձև 8): Վերարկուի համար օգտագործվող նյութերի բաղադրությունը. 1. աստառ՝ բնական մետաքսից, «8-C5-ВШ» արտիկուլից, պողպատագույն 100գ/մ² խտությամբ, 2. մուգ կարմիր եզրաշերտ՝ «2581» արտիկուլի մահուդե կտորից:							

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՁԵՎԵՐԸ, ՈՒՍԱԴԻՐՆԵՐԻ, ԹԵՎՔԱՆՇԱՆԻ ԵՎ ԴՐՈՇԻ ՁԵՎԵՐԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ «ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ, ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 1517-Ա ՈՐՈՇՄԱՆ:

- **1-ին, 3-4-րդ և 7-8-րդ չափաբաժինների համար՝ ուսադիրների հիմքի գույները պետք է համապատասխանեն բաճկոնի և վերարկուի գույներին:**
- **1-ին, 3-5-րդ չափաբաժինների մասով՝ չափսերը պետք է վերցվեն Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տեղակայված նստավայրերում (կից ներկայացվող ցանկին համապատասխան) աշխատող Դատական կարգադրիչներից՝ այցելությունները նախօրոք համաձայնեցնելով Գնորդի հետ (հեռ.(010) 209-705, 096-290-393):**
- **7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով՝ չափսերը պետք է վերցվեն Գնորդի կողմից նշված հասցեում (Երևան քաղաքում):**
- **Չափսերը վերցնելու պահին Գնորդը Վաճառողին պետք է տրամադրի տեղեկություն՝ դատական կարգադրիչների կոչումների վերաբերյալ:**
- **Գնորդի պահանջի դեպքում, 1-ին, 3-4-րդ և 7-8-րդ չափաբաժինների համար, Վաճառողը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:**

- Գնորդի պահանջի դեպքում, 5-րդ չափաբաժնի համար, Վաճառողը պետք է ներկայացնի կաշվի բնական լինելու և ներկի կայունության վերաբերյալ ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:
- 1-ին, 3-4-րդ և 7-8-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, որոնց վրա պետք է լինեն անվանումները՝ ըստ վերցված անհատական չափսերի:
- Ապրանքները պետք է լինեն պիտակավորված՝ պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքների չափսերը, խնամքի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Պայմանագրի կատարման փուլում Վաճառողը պարտավորվում է Գնորդին պարբերաբար տրամադրել տեղեկություն՝ իր մոտ առկա՝ պատրաստի ապրանքների քանակի և հասցեատերերի (դատական կարգադրիչների) վերաբերյալ: Գնորդը, նշված տեղեկությունն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում, ապահովում է տվյալ դատական կարգադրիչների ներկայությունը մատակարար կազմակերպության հասցե՝ պատրաստի ապրանքները տեղում փորձելու և չափսերի համապատասխանությունը ստուգելու նպատակով: Չափսերի մասով անհամապատասխանություններ ի հայտ գալու դեպքում՝ Վաճառողն առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետի ավարտը, պարտավոր է շտկել դրանք:

**Ապրանքի մատակարարման ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից:*

Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, այնուհանդերձ ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Վաճառողը կարող է ապրանքը մատակարարել պայմանագրով սահմանված ժամկետից ավելի կարճ ժամկետում:

ՑԱՆԿ

Դատական կարգադրիչների ծառայության բաժինների ու բաժանմունքների և հասցեների

ՀՀ վճռաբեկ դատարանի բաժին	Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի բաժին	Հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 23
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և վարչական դատարանների բաժին	Հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 23
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի բաժին	Հասցե՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9
ՀՀ սնանկության դատարան	Հասցե՝ ք. Երևան, Օտյան փողոց 53/2
Երևան քաղաքի դատարանի Կենտրոն բաժին	Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1
Երևան քաղաքի դատարանի Ավան բաժին	Հասցե՝ ք. Երևան, Գյուլիքեխվյան 20

Երևան քաղաքի դատարանի Շենգավիթ բաժին	Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պողոտա 24/1
Երևան քաղաքի դատարանի Էրեբունի բաժին	Հասցե՝ ք. Երևան, Մովսես Խորենացի 162ա
Երևան քաղաքի դատարանի Արաբկիր բաժին	Հասցե՝ ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10
Երևան քաղաքի դատարանի Աջափնյակ բաժին	Հասցե՝ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս 40

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Կոտայքի մարզի դատարանի բաժնի Հրազդանի բաժանմունք	Հասցե՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փող., 1/1
Կոտայքի մարզի դատարանի բաժնի Չարենցավանի բաժանմունք	Հասցե՝ ք. Չարենցավան, Երիտասարդական 2/1
Կոտայքի մարզի դատարանի բաժնի Եղվարդի բաժանմունք	Հասցե՝ ք. Եղվարդ, Չարենցի 29
Կոտայքի մարզի դատարանի բաժնի Աբովյանի բաժանմունք	Հասցե՝ ք. Աբովյան, Կոտայքի 8

Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Արտաշատի բաժանմունք	Հասցե՝ ք. Արտաշատ, Շահումյան 19
Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Մասիսի բաժանմունք	Հասցե՝ ք. Մասիս, 3-րդ թաղամաս, Հերացու փողոց 26/31
Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Վեդու բաժանմունք	Հասցե՝ ք. Վեդի, Մ.Խաչատրյան 1
Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Եղեգնաձորի բաժանմունք	Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Միկոյան 23
Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Վայքի բաժանմունք	Հասցե՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Արմավիրի մարզի դատարանի Արմավիրի բաժանմունք	Հասցե՝ ք. Արմավիր, Հանրապետության 41
Արմավիրի մարզի դատարանի Էջմիածնի բաժանմունք	Հասցե՝ ք. Էջմիածին, Կամոյի 15

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Արագածոտնի մարզի դատարանի Աշտարակի բաժանմունք	Հասցե՝ ք. Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65
Արագածոտնի մարզի դատարանի Ապարանի բաժանմունք	Հասցե՝ ք. Ապարան, Գայի 25
Արագածոտնի մարզի դատարանի Թալինի բաժանմունք	Հասցե՝ ք. Թալին, Խանջյան 13

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Տավուշի մարզի դատարանի Իջևանի բաժանմունք	Հասցե՝ Իջևան, Նալբանդյան 1/1
Տավուշի մարզի դատարանի Դիլիջանի բաժանմունք	Հասցե՝ ք. Դիլիջան, Շահումյան 15
Տավուշի մարզի դատարանի Նոյեմբերյանի բաժանմունք	Հասցե՝ ք. Նոյեմբերյան, Կամոյի 2
Տավուշի մարզի դատարանի Բերդի բաժանմունք	Հասցե՝ ք. Բերդ, Այգեստան 49ա

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Գեղարքունիքի մարքի դատարանի Գավառի բաժանմունք	Հասցե՝ ք. Գավառ, Սայադյան 18
Գեղարքունիքի մարքի դատարանի Սևանի բաժանմունք	Հասցե՝ Սևան, Աբովյան 6/1
Գեղարքունիքի մարքի դատարանի Մարտունու բաժանմունք	Հասցե՝ ք. Մարտունի, Շահումյան 5
Գեղարքունիքի մարքի դատարանի Վարդենիսի բաժանմունք	Հասցե՝ ք. Վարդենիս, Ազգալդյան 2
Գեղարքունիքի մարքի դատարանի Ճամբարակի բաժանմունք	Հասցե՝ ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 99/1

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Լոռու մարզի դատարանի Վանաձորի բաժանմունք	Հասցե՝ ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6

Լոռու մարզի դատարանի Ալավերդու բաժանմունք	Հասցե՝ ք. Ալավերդի, Թումանյան 1
Լոռու մարզի դատարանի Տաշիրի բաժանմունք	Հասցե՝ ք. Տաշիր, Ջահուկյան 19
Լոռու մարզի դատարանի Սպիտակի բաժանմունք	Հասցե՝ ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 2/10
Լոռու մարզի դատարանի Ստեփանավանի բաժանմունք	Հասցե՝ ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 53

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Սյունիքի մարզի դատարանի Կապանի բաժանմունք	Հասցե՝ ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2
Սյունիքի մարզի դատարանի Գորիսի բաժանմունք	Հասցե՝ ք. Գորիս, Անկախության 4/1
Սյունիքի մարզի դատարանի Սիսիանի բաժանմունք	Հասցե՝ ք. Սիսիան, Գարեգին Նժդեհի 6
Սյունիքի մարզի դատարանի Մեղրու բաժանմունք	Հասցե՝ ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 24/1

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Շիրակի մարզի դատարանի Գյումրու բաժանմունք	Հասցե՝ ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7
Շիրակի մարզի դատարանի Մարալիկի բաժանմունք	Հասցե՝ ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198

ԳՆՈՐԴ

Դատական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Հ/Հ՝ -

ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Զ. Սարկավագի 157

Հ/Հ՝ 1510023294810100

ՀՎՀՀ՝ 00803554

«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ա. Ազատյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
« 26 » « 10 » 2020թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) /	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18211500/504	Բաճկոն													
3	18211500/502	Բաճկոն													
4	18211500/501	Բաճկոն													
5	18421170/501	Գոտիներ													
7	18211100/501	Վերարկու													
8	18211100/502	Վերարկու													

*Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ

Դպրական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Հ/Հ՝ -

ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Հ. Սարկավագի 157

Հ/Հ՝ 1510023294810100

ՀՎՀՀ՝ 00803554

«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ա. Ազատյան

/ստորագրություն/

Հավելված N 3
« 26 » « 10 » 2020թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 26 » « 10 » 2020թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն